

## Սամվել Դիլբանդյան

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ,  
իրավ. գիտ. դոկտոր

### ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Դատաքննությունը դատական քննության կարևոր մասերից մեկն է, որովհետև այստեղ իրականացվում է կողմերի ներկայացրած ապացույցների հետազոտումը: Այն դատարանի կողմից օրինական, հիմնավոր և արդարացի դատավճռ կայացնելու հիմքն է: Եիշտ է, դատական քննության մյուս մասերը նույնպես կարևոր նշանակություն ունեն արդարադրության իրականացման համար, սակայն դրանք ըստ էության կոչված են ծառայելու դատաքննությանը կամ հենվում են դրա արդյունքների վրա: Դրանով է պայմանավորված այն, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում առավել մանրամասն են կարգավորված դատաքննության ընթացքում իրականացվող քննչական դատական գործողությունները, իսկ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում հանդիպում ենք նոր կամ էապես տարբերվող իրավական կարազվորումների:

Կողմերի ակտիվությունն ակնհայտորեն երևում է դատաքննության մասում, որովհետև նրանք հնարավորություն են ստանում հրապարակայնորեն հաստատելու կամ հերքելու ներկայացված մեղադրանքը: Մրցակացության սկզբունքը ենթադրում է կողմերի ակտիվություն և հավասար հնարավորություն, որը պակասում է մինչդատական վարույթում: Դատական գործողությունները բնութագրվում են որոշակի առանձնահատկությամբ՝ կապված նրանց վարույթի ձևի և դատավարական ռեժիմի հետ: Դատական գործողության վարույթը հենց դատական նիստում կողմերի կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ «դատավարական գործողություն» հասկացության անբաժանելի և բնորոշիչ հատկանիշն է<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում արդարացիորեն «քննչական գործողություններ» և «դատական գործողություններ» հասկացությունները նույնացվել են, այսպես՝ ըստ ՀՀ քր. դատ. օր-ի նախագծի 6-րդ հոդվածի 41-րդ կետի. «քննչական գործողություն» քննիչի կամ դատարանի կողմից, ինչպես նաև քննիչի հանձնարարությամբ հետաքննության մարմնի կողմից կատարվող սույն օրենսգրքով նախատեսված գործողություն, որի արդյունքում ակնկալվում է ձեռք բերել ապացույց»:

Քրեադատավարական գործող օրենսգիրքը նախատեսում է այն գործողությունների շրջանակը, որոնք կարող են իրականացվել դատաքնության ընթացքում: Նշված գործողությունների շարքում առանձնակի պետք է կարևորել հարցաքննությունները: Ճանաչողական ուղղվածության գործողությունների համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հարցաքննությունը, որի էությունը դատավարական օրենքով նախատեսված սուբյեկտներից ցուցմունքներ ստանալն է: Հարցաքննության նպատակը քննվող դեպքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելն է: Այս գործողության կարևոր առանձնահատկությունն այն է, որ հետազոտվում են ոչ թե նյութական առարկաների վրա, այլ մարդու գիտակցության մեջ դրոշմված հետքերը, ուստի հարցաքննությունը կապված է հարցաքննվողի և հարցաքննողի անձնային առանձնահատկությունների հետ և հիմնված է երկկողմ հաղորդակցության վրա<sup>1</sup>:

Հարցաքննությունը որպես ապացույցների հավաքմանն ուղղված քննչական գործողություն իրականացվում է ինչպես մինչդատական վարությամբ, այնպես էլ դատական քննության ժամանակ: Պայմանավորված քրեական դատավարության փուլի խնդիրներով այն ունի իր առանձնահատկությունները: Դատական քննությունը բնութագրվում է այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են՝ բանավորությունը, անմիջականությունը և կողմերի մրցակցությունը: Սանձանակում է, որ ի տարբերություն մինչդատական վարություն ինկվիզիցիոն դատավարական ձևի պայմաններում ապացույցի հետազոտմանը՝ դատաքննության ընթացքում ապահովվում է կողմերի անմիջական մասնակցությունը ցուցմունքի հետազոտմանը: Դատական նիստի ժամանակ համարավոր է լինում ապահովել խաչաձև հարցաքննության իրականացում, որի արդյունքում պարզել բոլոր հակասությունները, որոնք չէին բացահայտվել քննիչի կողմից հարցաքննության ժամանակ:

Խաչաձև հարցաքննությունը, որ ընկած է դատաքննության հիմքում, այն կարևոր պահն է, երբ ցուցմունքները դատաքննության ընթացքում վեր են ածվում դատական ապացույցների: Խաչաձև հարցաքննությունը անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման կարևոր երաշխիքներից մեկն է: Ամբաստանյալը չի կարող զրկվել այն անձանց խաչաձև հարցաքննության

---

<sup>1</sup> Стен Пашин С.А., Содержательные аспекты допроса в уголовном

իրավունքից, որոնք իր դեմ ցուցմունքներ են տվել: Այն դատաքննության ընթացքում հանդես եկող յուրաքանչյուր անձի բացարձակ իրավունքն է: Նշված իրավունքի իրականացման համար դատարանը պարտավոր է կողմերի համար ստեղծել հավասար պայմաններ:

Դատաքննության ընթացքում հարցաքննությունն իրականացվում է ոչ միայն գործի հանգամանքների մասին տեղեկություններ ստանալու, այլև կողմերի դիրքորոշումը հաստատելու կամ հերքելու համար: Տուժողն ու ամբաստանյալը նախքան դատական նիստը հնարավորություն են ունենցել ծանոթանալու քրեական գործերի նյութերին, նրանք ընդհանուր գծերով տեղյակ են իրենց հակառակորդի դիրքորոշմանը:

*Դատարանում ամբաստանյալի հարցաքննության առանձնահատկությունները*<sup>1</sup>: Քանի որ մեղադրյալը դատական քննության կենտրոնական սուբյեկտն է, որի շուրջ իրականացվում է դատավարությունը, ուստի հարցաքննության ընթացքում նա օժտված է ավելի ընդարձակ իրավունքներով:

Նախ՝ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Սահմանադրական այս կարգավորումից հետևում է, որ ամբաստանյալն ինքը կարող է ընտրել՝ տա՞լ ցուցմունք ըստ տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ, թե՞ հրաժարվել ցուցմունք տալուց՝ դրանով իսկ առաջարկելով մեղադրող կողմին ապացուցել իր մեղավորությունը: Ի տարբերություն վկայի՝ մեղադրյալն իրավունք ունի ցուցմունք չտալ ոչ միայն իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, այլ ցանկացած հարցով: Սա համարվում է մեղադրյալի կողմից իր պաշտպանության իրավունքի իրականացման կարևոր եղանակներից մեկը:

Այս իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (1950թ.) 6-րդ հոդվածում: Եվրոպական դատարանը նշում է, որ քրեական գործի արդարացի քննության անբաժան մասն է մեղադրյալի լռելու և իր դեմ ցուցմունքներ չտալու իրավունքը: Նշված իրավունքի հռչակումն ուղղված է իշխանության չարաչափումներից մեղադրյալի պաշտպանությանը և միաժամանակ

судопроизводстве // Юридическая психология. 2007. № 3, էջ 12-16:

<sup>1</sup> ՀՀ քրեական դատավարության մոր օրենսգրքի նախագծում ամբաստանյալ հասկացության փոխարեն օգտագործվում է մեկ ընդհանուր՝ «մեղադրյալ» հասկացությունը:

օգնում է խուսափել հնարավոր դատական սխալներից: Իրեն ներկայացված մեղադրանքին չնպաստելու իրավունքը ենթադրում է, որ քրեական գործով մեղադրողը պետք է ձգտի իր փաստարկները չկառուցել ապացուցման այն միջոցների վրա, որոնք ստացվել են հարկադրանքի և ճնշման տակ՝ հակառակ մեղադրյալի կամքին<sup>1</sup>:

Ի տարբերություն դատավարության այլ մասնակիցների՝ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված է, որ ամբաստանյալն իրավունք ունի ցուցմունք տալու դատաքննության ցանկացած պահի, որը չի նշանակում, թե ամբաստանյալը կարող է ընդհատել կամ պահանջել դատարանից ընդհատելու դատավարության այլ մասնակցի հարցաքննությունը կամ դատական այլ գործողություն և լսել իրեն:

Որպես առանձնահատկություն պետք է նշել նաև այն, որ ամբաստանյալը կաշկանդված չէ նախաքննության ընթացքում տրված իր ցուցմունքներով և կարող է փոխել դրանք: Քրեադատավարական օրենսդրությամբ չի սահմանված, որ կասկածյալը, մեղադրյալը կամ ամբաստանյալը նախազգուշացվում են սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին:

Պետք է նշել, որ այս հարցի հետ կապված տարբեր երկրներում հանդիպում ենք հակառակ կարգավորման: Հարկ է նշել, որ անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում այն դրույթները, որոնք ազատում են մեղադրյալին հանցագործություն կատարելու մեջ ինքն իրեն մերկացնող ցուցմունքներ տալու պարտականությունից, լրացված են կեղծ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին կետով: Նման դեպքերում ամբաստանյալն իր գործով ցուցմունքներ տալիս է երդմամբ՝ որպես պաշտպանության կողմից վկա՝ հայտնվելով երկընտրանքի առաջ. կամ նա լռում է, կամ, եթե որոշում է ցուցմունքներ տալ, ապա պատասխանատվություն է կրում կեղծ ցուցմունք տալու համար:

Նման իրավական կարգավորում նախատեսվում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում: Այն մեր քրեական դատավարության իրավունքում նորույթ է, որովհետև ինչպես ՀԽՍՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքով, այնպես էլ գործող օրենսգրքով սուտ ցուցմունքներ տալու համար կասկածյալը և մեղադրյալը չեն նախազգուշացվել քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին: Հայրենական դատավարական գրակա-

---

<sup>1</sup> St'u Serves, 40:

նության մեջ ընդունված է եղել այն մոտեցումը, որ ոչ միայն ցուցմունք չտալը, այլև սուտ ցուցմունք տալը համարվել է մեղադրյալի պաշտպանության միջոց: Դատավարական գրականության մեջ գործող օրենսդրական կարագվորումը հիմնավորվում է նաև այն պատճառաբանությամբ, որ սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության սպառնալիքը ծայրահեղ դեպքերում ենթադրյալ հանցագործության մեջ մեղադրվող անմեղ անձին կարող է դրդել ինքնախոստովանության<sup>1</sup>:

Կարծում ենք մեղադրյալի ցուցմունքներն արժանահավատ գնահատելու համար ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում տեղ գտած այդպիսի կարգավորումն արդարացի է, որովհետև այն քրեական վարույթն իրականացնող մարմնի մոտ բարձրացնում է մեղադրյալի ցուցմունքների նկատմամբ ունեցած արժանահավատության աստիճանը:

Որպես մեղադրյալի հարցաքննության առանձնահատկություն պետք է համարել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում տեղ գտած հետևյալ կարգավորումը, մեղադրյալը կարող է հարցաքննվել այն դեպքում, երբ կողմերից մեկը նման միջնորդություն է ներկայացրել նախնական դատախոսման ընթացքում, և մեղադրյալը հաստատել է ցուցմունք տալու իր մտադրությունը: Այսպիսի կարգավորումը բացառում է բոլոր դեպքերում մեղադրյալին պարտադիր հարցաքննության ենթարկելու հանարավորությունը:

Ամբաստանյալի հարցաքննությունը պետք է իրականացվի ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված, խստիվ սահմանված հաջորդականությամբ՝ սկսելով պաշտպանության կողմից: Ինչ վերաբերում է դատարանին, ապա օրենսդիրը նույնիսկ խուսափել է «հարցաքննություն» հասկացությունից՝ սահմանելով, որ դատարանը հարցեր տալիս է կողմերի հարցաքննությունից հետո (ՀՀ քր. դատ. օր., մաս 3, հոդված 336): Օրենսդրական այդպիսի կարագավորումը բխում է մրցակցության սկզբունքից, որտեղ ակտիվ մասնակիցներ են կողմերը, իսկ դատարանը անհրաժեշտ պայմաններ է ապահովում ապացույցի հետազոտման համար: Հարցաքննության համար սահմանված հաջորդականությունը ոչ բոլոր դատավարագետների կողմից է ընդունվում: Որոշ հեղինակներ գտնում են, որ մեղադրող կողմն է ամբաստանյալին այդ կարգավիճակով ներկայացրել դատարանին՝

---

<sup>1</sup> Смирнов А. В., Калиновский К. Б. Уголовный процесс: Учебник для вузов, 2006, էջ 198:

«բերելով նրան դատարան»: Ինչո՞ւ այդ դեպքում ոչ թե պետական մեղադրողը, որ մեղադրում է ամբաստանյալին, այլ պաշտպանը պետք է առաջինը հարցաքննի նրան<sup>1</sup>: Քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած իրավական կարգավորումը չի բխում նրցակցության սկզբունքից:

Նկատի առնելով վերոշարադրյալը՝ պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում այս հարցը ստացել է այլ կարգավորում: Մասնավորապես, հարցաքննության կանչված անձին առաջինը հարցեր է տալիս այն կողմը, որի միջնորդությամբ հրավիրվել է անձը: Սկզբնական հարցաքննությունից հետո անձին կարող են հարցեր տալու հակառակ կողմը: Նախագահողն իրավունք ունի անձին հարցեր տալու սկզբնական և խաչաձև հարցաքննություններն ավարտելուց հետո: Դատարանի նախածեռնությամբ հրավիրված անձանց առաջինը հարցեր է տալիս նախագահողը, ապա մեղադրանքի և պաշտպանության կողմերը:

Ինչպես ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում, այնպես էլ նախագծում ամբաստանյալի և դատավարության մյուս մասնակիցների հարցաքննության համար օրենքով սահմանված հաջորդականությունը էական երաշխիք է ապացուցման գործընթացում կողմերի իրավահավասարությունն ապահովելու համար: Այս տեսանկյունից անընդունելի են պրակտիկայում հանդիպող այն դեպքերը, երբ դատավորները հաճախ են խախտում սահմանված կարգը, որի համաձայն՝ դատարանը ամբաստանյալին հարցեր է տալիս, երբ կողմերը դեռ չեն ավարտել վերջինիս հարցաքննությունը:

Կարծում ենք, որ ուշադրության է արժանի ևս մի կարևոր հարց. հարցաքննությունը պետք է սկսել ազատ շարադրանքով, թե հարց ու պատասխանով: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքից հետևում է, որ հարցաքննությունը սկսվում է հարց ու պատասխանով, որովհետև ցուցմունքներն ազատ շարադրելու վերաբերյալ որևէ նշումի մենք չենք հանդիպում: Այդպիսի իրավական կարագավորման հիմքում անկասկած ընկած է անզլոսաքսոնական մոդելը,

---

<sup>1</sup> Ст'я Баев О.Я., Прокурор как субъект уголовного преследования. М.: Юрлитинформ, 2006, т. 2, с. 100; Баев О.Я., Основы методики уголовного преследования и профессиональной защиты от него: научно-практическое пособие (на примере уголовно-процессуального исследования должностных и служебных преступлений). М.: Эксмо, 2009, т. 2, с. 227:

որտեղ հարցաքննությունը տեղի է ունենում ոչ թե հաջորդական պատասխանների, այլ կողմերի հնչեցրած անընդմեջ հարցերին կարճ պատասխաններ տալու ձևով: Մեր հետևությունն այն է, որ ամբաստանյալն օժտված չէ տեղի ունեցած իրադարձությունների, ինչպես նաև իր վարքագծի շարժառիթների վերաբերյալ սեփական վարկածն ազատորեն շարադրելու իրավունքով:

Դատաքննության ընթացքում հարցաքննության առավելությունն այն է, որ երկու կողմերն էլ ակտիվորեն ներգրավվում են հարցաքննությանը՝ պարզելով ապացուցման առարկան կազմող բոլոր հանգամանքները: Կողմերի հարցաքննությունից հետո դատարանի կողմից հարցեր տալը չպետք է հանգեցնի ամբաստանյալի նոր հարցաքննության: Կարծում ենք, որ դատարանը ամբաստանյալից պետք է պարզի այն հանգամանքները, որոնք չեն հետազոտվել կողմերի կողմից խաչաձև հարցաքննության ընթացքում: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը մրցակցության հետ միաժամանակ ընդունելով ի պաշտոնե քննության մոդելը, ենթադրում է դատարանի որոշակի ակտիվություն, կապված ինչպես փաստական հանգամանքների պարզաբան, այնպես էլ արարքի իրավաբանական գնահատականի հետ: Այս հարցերի լուծումը, կարծում ենք, որ արդեն իսկ ենթադրում է դատարանի առավել ակտիվություն, քան այն ինչ նախատեսված է քրեական դատավարության գործող օրենսգրքով: Սա նշանակում է, որ դատարանը նման դեպքերում ամբաստանյալից պետք է ճշտի այն ամենը, ինչ իրեն հետաքրքրում է՝ դրանով իսկ կատարելով պետական մեղադրողի, իսկ որոշ դեպքերում նաև պաշտպանի աշխատանքը:

Ելնելով այն բանից, որ հենց դատարանն է դատավճիռ կայացնելու, որը պետք է համապատասխանի օրինական, հիմնավորված և արդարացի լինելու պահանջներին, կարծում ենք, դատարանն իրավունք ունի պարզելու իրեն հետաքրքրող հարցերը, սակայն նա կարող է տալ դրանք միայն այն բանից հետո, երբ դատավարության բոլոր մասնակիցների հարցերի պաշարը սպառվում է: Այս կապակցությամբ դժվար է համաձայնել այն մոտեցման հետ, որ դատարանը չպետք է ամբաստանյալին տա այնպիսի հարցեր, որոնց պատասխանները կարող են ծառայել կողմերից մեկի շահերին,։ Դատարանն իր գործողություններով արտահայտում է ոչ թե կողմերից որևէ մեկի, այլ իրավունքի շահերը: Բոլոր այն հարցերը, որոնք դատարանն ուղղում է կողմերին՝ նպատակ է հետապնդում ստանալ տեղեկություններ

գործի հանգամանքների մասին և դրանով պարզել գործով ճշմարտությունը:

Դրա հետ մեկտեղ՝ դատավարության այն մասնակիցը, որի հարցը նախազահողը հանում է գործին առնչություն չունենալու պատճառաբանությամբ, հնարավորություն ունի դատարանին ներկայացնելու ապացույցներ, որոնք հաստատում են այդ հարցի միջոցով բացահայտվելիք փաստի և ապացուցման առարկայի միջև կապի առկայությունը: Պետք է նշել, որ և՛ տրված հարցը, և՛ այն դատարանի կողմից մերժելու փաստը, և՛ այն մերժելու պատճառը, և՛ հօգուտ այդ հարցի կարևորության կողմի բերած փաստարկները պետք է արտացոլվեն դատական նիստի արձանագրությունում:

Հարցաքննության ընթացքում դատարանին ներկայացվող կարևոր պահանջներից մեկն այն է, որ նա պետք է մերժի բոլոր ուղղորդող հարցերը, ինչպես նաև այն հարցերը, որոնք կապված չեն քրեական գործի հետ: Հարկ է նշել, որ ուղղորդող հարցը վտանգ է ներկայացնում ցուցմունքների հավաստիությանը և օբյեկտիվությանը. անկախ այն բանից՝ մերժվել է, թե ոչ, այն արդեն իսկ վնասակար է, քանի որ հնչելով դատական նիստում, դատավարության համապատասխան մասնակցի պատասխանն ուղղորդել է հարց տվողին անհրաժեշտ ճանապարհով<sup>1</sup>: Ուղղորդող է համարվում ցանակացած հարց, որին կարող է տրվել «այո» կամ «ոչ» պատասխանը, այսինքն ամբողջ տեղեկատվությունն արդեն հարցի մեջ է, իսկ պատասխանողին մնում է այն հաստատել կամ հերքել:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ տուժողը նույնպես իրավունք ունի ցուցմունքներ չտալու իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ: Այն դեպքում, երբ տուժողը համաձայնություն է տալիս ցուցմունք տալու, նա պետք է զգուշացվի այն մասին, որ նրա ցուցմունքները քրեական գործով կարող են օգտագործվել որպես ապացույց, նույնիսկ այն դեպքում, երբ նա հետագայում հրաժարվում է դրանցից: Տուժողը կարող է ցուցմունք տալ այն լեզվով, որին ինքը տիրապետում է, ինչպես նաև անվճար օգտվել թարգմանչի ծառայությունից:

ՀՀ քր. դատ. օր.-ի 343-րդ հոդվածի համաձայն՝ տուժողի հարցաքննությունն իրականացվում է վկայի հարցաքննության համար սահմանված կանոններով, սակայն ունի նաև առանձնահատկութ-

<sup>1</sup> Ст'я Соловьев А.Б., Воробьев В.П., О тактике судебного допроса //Вопросы борьбы с преступностью. М., 1972. Вып. 16, էջ 114:



յուններ, որոնք պայմանավորված են տուժողի դատավարական վիճակով:

Տուժողը քրեական դատավարությունում հանդես է գալիս որպես մեղադրանքի կողմ, սա նշանակում է, որ որպես մեղադրանքի կողմի «վկա» նրան առաջինը հարցաքննում է մեղադրողը, հետո՝ պաշտպանության կողմը, և վերջում՝ դատարանը:

Տուժողի հարցաքննության առանձնահատկությունն ընդգծելու համար պետք է նշել հետևյալ հանգամանքները:

1. Չնայած քրեական դատավարության օրենսգրքում սահմանված է, որ տուժողի հարցաքննությունն իրականացվում է վկայի հարցաքննության համար սահմանված կարգով, բայց ի տարբերություն վկաների՝ տուժողները մինչև իրենց հարցաքննությունը դատարանի դահլիճից դուրս չեն գալիս, նրանք ներկա են լինում դատական քննության ամբողջ ընթացքին: Սա նշանակում է, որ օրենքի՝ վերը նշված դրույթը չի կարելի հասկանալ բառացի, քանի որ տուժողը քրեական գործով շահագրգռված անձ է, հետևաբար նա պետք է ներկա լինի դատական քննության բոլոր մասերում:

2. Քրեական դատավարության օրենսգրքում չի սահմանված, որ տուժողը նախագահողի թույլտվությամբ կարող է ցուցմունքներ տալ դատաքննության ցանկացած պահի, կարծում ենք, որ ամբաստանյալի համար սահմանված այս իրավունքն համաբանության (անալոգիայի) կարգով պետք է կիրառել նաև տուժողի համար, քանի որ այն բխում է կողմերի իրավահավասարության սկզբունքից:

Ի տարբերություն տուժողների՝ վկաները հարցաքննվում են միմյանցից անջատ և դեռևս չհարցաքննված վկաների բացակայությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 340, մաս 1): Այդ պահանջը պայմանավորված է վկաներից իրականությանը համապատասխանող օբյեկտիվ ապացույցներ ստանալու ձգտմամբ: Վկաները քրեական դատավարությունում կան մեղադրանքի կողմի վկաներն են, կան պաշտպանության, և դատարանում հայտնվում են մեղադրական եզրակացությանը կցվող ցուցակը ներկայացնելիս, կան էլ երբ կողմերի միջնորդությամբ հրավիրվում են դատական նիստի: Այս հանգամանքը բնականաբար ենթադրում է մինչև դատարանում վկաների հարցաքննությունը նրանց նկատմամբ կազմակերպական բնույթի որոշ գործողությունների կատարում: Իհարկե, դա չի նշանակում, որ կողմերը վկաներին պետք է դրդեն սուտ ցուցմունքներ տալու: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է վկաների կողմից իրենց ցուցմունք-

ներն այնպես ներկայացնելուն, որն առավել ընկալելի կլինի դատարանին: Պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ վկաները դատարանում չփոխեն կամ չհրաժարվեն ցուցմունքներ տալուց<sup>1</sup>: Կազմակերպական միջոցառումների մեջ պետք է ներառել նաև վկաների և տուժողների անվտանգության պահպանությանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

Ինչպես ամբաստանյալի հարցաքննության դեպքում, խստիվ պահպանվում է նաև վկայի հարցաքննության հաջորդականությունը, նախ՝ հարցաքննում է նրան հրավիրելու միջնորդությամբ հանդես եկած կողմը, հետո՝ մյուս կողմը, վերջինը հարցեր է տալիս դատարանը:

Ցուցմունքներ տալիս դատարանի թույլտվությամբ վկան կարող է օգտվել փաստաթղթերից և գրավոր նշումներից (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 86, մաս 5): Իհարկե, քանի որ դատաքննությունն իրականացվում է անմիջականության և բանավորության սկզբունքների հիման վրա, հետևաբար վկան այդ իրավունքից պետք է օգտվի այն դեպքում, եթե դժվարանում է հիշողությամբ վերարտադրել մեծ թվով անվանումներ, տերմիններ, թվեր, հակառակ դեպքում նրա ցուցմունքների հավաստիության վերաբերյալ առաջանում է կասկած:

Դատավարության ընթացքում հարցաքննվողի անձի վերաբերյալ տվյալների հետազոտման հնարավորության հարցը հավասարապես վերաբերում է և՛ տուժողների, և՛ վկաների հեղինակությանը: Դատարանի իրավունքն ու պարտականությունն է՝ որոշելու, թե կարելի՞ է այս կամ այն հարցը ուղղել տուժողին (վկային): Դատական նիստի ժամանակ տուժողի (վկայի) անձը բացասական գծերով բնութագրող տեղեկությունների հետազոտությունը թույլատրելի է միայն դրա համար անհրաժեշտ բոլոր հիմքերի առկայության դեպքում:

---

<sup>1</sup> Стів Александров А.С., Стуликов А.Н., Судебные доказательства и докапывание по уголовным делам: Лекции. - Н. Новгород: Волго-вятская академия государственного управления, 2002, т. 160-162:

***Samvel Dilbandyan***

*Head of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics,  
Doctor of Legal Sciences*

## **PECULIARITIES OF INTERROGATION IN COURT**

The examination of evidence is one of the most important parts of the trial, since it is the main precondition for the court to deliver lawful, reasonable and fair judgment. The examination is one of the most prevailing actions carried out during the trial, which has its peculiarities in different stages of criminal proceedings. The cross examination, as one of the guarantees of human rights protection can be carried out during the trial.

Right before the adoption of the new Code of Criminal Procedure, the analysis of the peculiarities of the examination during the trial is of a crucial importance for solving all the problems raising during the court examination.